# ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Նայեցէք աչքեր, գարուն է եկեր.
Աշխարհը ամբողջ ծաղկով է նաշխեր.
Նայեցէք աչքեր, սիրոյ նանիններ
Լազուարթ երկինքին, իղձե՜ր կը յածին.
Նայեցէք աչքեր, սիրոյ ակունքներ
Մարմանդին, այգին, յոյսե՜ր կը ծնին:

×

Լսեցէք ունկեր, ծառեր, պուրակներ
Համերգ են սարքեր, կ'երգեն գնծերգներ.
Լսեցէք ունկեր, գանձաստան խորշեր
Դաշտէն, բլուրէն, քաղցրիկ աւաչներ
Լսեցէք ունկեր, ճծծիւններ, տաղեր,
Չի օր մը կուգայ երբ դուք չէք լսեր:

×

Շնչեցէք ռունգեր, լիաթոք, առոյգ,
Չի ծիծաղն ու բոյր կ'ըլլան լքեալ գոյք.
Շնչեցէք ռունգեր, վասնզի հանոյք
Պիտի պատճառէք եւ շքեղ խնճոյք
Որդին որ պիտի ընէ ձեզ գանոյք
Շնչեցէք ռունգեր, գիտեմ ես ըստոյգ:

×

Աշխարհ կը գնայ, թռչունն իսկ հիմա
Սիրով կ'արբենայ. ծղրիթն անդադար
Կ'ըսէ ալէլուն. մեղուն իմաստուն,
Զգլխած բոյրէն, կ'ուզէ ծաղկէն բառ.
Մինչ արեւն անբաւ միջոցին վրայ
Ծով մ'է հեշտանքի, կեանքի ազդարար:

×

Լոյսե՜ր ու բո՜յրեր, դիւթական ձայներ
Անմեղ շոյանքներ, անմոռաց յուշեր,
Քաղցր ճաշակներ, լիացուցէք մեր
Զգայարաններ. իսկ վաղն անագան...:
Աշխարհ կը գնայ, զանգակ մ'ակամայ
Մեղմ կը թրթռայ, մա՜հ մը կ'ափսոսայ...:

ԶԱՒԷՆ Վ. Զ.

digitised by A.R.A.R.@